ԽԱՂ «ԹԱՆԳՐԱՄ»

Տարիքային խումբ - Խաղը նպատակահարմար է կիրառել ինչպես դպրոցական, այնպես էլ՝ նախադպրոցական տարիքի երեխաների հետ:

Նպատակ - Խաղի կիրառումը հնարավորություն է տալիս զարգացնել երեխաների՝

- մտածողությունը, երևակայությունը, ուշադրությունը,
- տարածաչափական պատկերացումները,
- մանր շարժունակությունը,
- տևական ժամանակ նստելու և կենտրոնացած աշխատելու կարողությունը,
- սահմանված կանոններին հետևելով՝ աշխատանք կատարելու

:

Թանգրամի օգնությամբ հնարավոր է նաև երեխաներին սովորեցնել երկրաչափական պատկերները և գույները:

Անհրաժեշտ նյութեր - «Թանգրամ» խաղի համար սահմանված ձևով և չափերով 7 երկրաչափական պատկեր: Սկզբնական շրջանում երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ նաև պատկերների պատրաստի օրինակներ՝ գրքույկների տեսքով, տպված կամ էլեկտրոնային տարբերակով:

Ընթացք - Երեխաներին առաջարկվում է տրված 7 երկրաչափական պատկերներն օգտագործելով ստանալ 1 իմաստալից պատկեր (տառեր, թվեր, կենդանիներ և այլն)՝ պահպանելով հետևյալ կանոնները.

- բոլոր 7 պատկերները պարտադիր պետք է օգտագործել,
- բոլոր պատկերները պետք է հատվեն մեկը մյուսին ՝ կողմերով կամ անկյուններով,
- պատկերները չեն կարող ծածկել մեկը մյուսին,
- պատկերների համադրումը սկսել մեծ եռանկյան տեղի որոշումով:

Թանգրամի միջոցով տարաբնույթ պատկերների պատրաստի օրինակներ հնարավոր է գտնել համացանցում, իսկ հայերեն տառապատկերների պատրաստի օրինակները կարող եք տեսնել ստորև[1]: Հայերեն այբուբենի Ձ, Ճ, Ց, Փ, Ք, Ֆ տառեր ստանալու համար անհրաժեշտ է ունենալ տանգրամի 2 օրինակ:

[1] Թանգրամի միջոցով ստեղծված հայերեն տառատեսակների օրինակները հեղինակային են և ստեղծված են մասնագիտական փորձի հիման վրա: